

ԺԳ

Լեւոն ի Սպանիա

Salsolastrum Մադրիդի, Վիլլարեալի եւ Անդալուսի



Լեւոն երբ հասաւ Արագոն (1383 ապրիլ), թագաւորը (Պետրոս Դ), թագուհին, Ղերոնայի դուքսն ու դքսուհին եւ իրենց որդին, նոյնպէս եւ պետական պաշտօնատարներ ու ժողովրդի անթիւ անհամար բազմութիւն մը թափօր կազմելով դիմաւորեցին Հայոց թշուառ թագաւորն ու հետեւորդները, ընծայելով շատ մը պարգեւներ: Իսկ Պետրոս Դ տարեկան թոշակ մը յատկացուց Լեւոնի, որ կտանար մինչեւ իր մահը(1):

Արագոնէն անցաւ Կաստիլյա, ուր աւելի մեծ ընդունելութիւն կսպասէր իրեն:

Յովհաննէս Ա., որ Պորտուգալի թագաւորին ազջկան հետ ամուսնանալու համար Բագախոզ կը զանուէր եւ հարսնիքը պիտի կատարուէր նոյն տարւան մայիսի 12-ին, երբ Լեւոնի Կաստիլյա մտնելն իմացաւ՝ պատգամաւորութիւն մը զրկեց, փառաւոր եւ արժանավայել կերպով Բագախոզ առջնորդելու համար Հայոց թագաւորը, միանգամայն յայտարարելով որ հարսանեկան հանդէսը կատարելու համար պիտի սպասէ Լեւոնի ժամանե-

(2) Այս մասին պատմիչները բացարձակ լուռքիւն կը պահեն. բայց Լեւոն իր կսակին մէջ (տե՛ս գլ. ԺԸ) յայտնապէս կը յիշէ: